



կայախտալ  
ինվեստմընթս

**«ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՍ» ՓԲԸ**

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Խոբենացու փողոց 15,  
գրասենյակ 6 Հեռ: (374 10) 546 431 Ֆաքս: (374 10) 547 431  
Էլ. փոստ՝ mail@capital.com.am Կայք՝ www.capital.com.am

**«ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԱԳԻՐ**

**1. ՆԿԱՐԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ**

Սույն նկարագրի նպատակն է «Կայախտալ Ինվեստմընթս» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ներդրումային ընկերություն) Հաճախորդին ներկայացնել՝

- ա) Ներդրումային ընկերության և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն,
- բ) տեղեկություններ Հաճախորդին ներդրումային ծառայություններ մատուցելու վերաբերյալ
- գ) տեղեկություններ ներդրումային ընկերության շահերի բախման քաղաքականության վերաբերյալ,
- դ) տեղեկություններ արժեթղթերի և դրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ
- ե) արժեթղթերով գործարքների կնքման վայրի մասին,
- զ) տեղեկություններ Ներդրումային ընկերության կողմից գանձվող սակագների վերաբերյալ (համաձայն կից ներկայացվող փաստաթղթի):

**2. ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍՈՒՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ներդրումային ընկերությունն ունի ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված թիվ 6ՆԸ լիցենզիան, համաձայն որի Ներդրումային ընկերությունը կարող է մատուցել հետևյալ ծառայությունները՝

- ա) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին գործարքների կատարումը,
- բ) արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրումը հաճախորդներին,
- գ) իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարումը,
- դ) արժեթղթերի փաթեթի կառավարումը,
- ե) արժեթղթերի երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխումը:

Ներդրումային ընկերության գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան 0010, ԷԼԻՏ ՊԼԱՋԱ Բիզնես Կենտրոն, Խոբենացի 15, 3-րդ հարկ, գրասենյակ 6: Ներդրումային ընկերության հեռախոսահամարներն են.

(37410) 546431 կամ 54 74 31,

իսկ ֆաքսի համարը՝ (37410) 54 74 31

Ներդրումային ընկերության ինտերնետային կայքն է [www.capital.com.am](http://www.capital.com.am)  
Ներդրումային ընկերության և Հաճախորդի միջև հաղորդակցության լեզուն հայերենն է:

**3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱՆՈՐԴԻՆ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ներդրումային ընկերությունը Հաճախորդին ներդրումային ծառայություն է մատուցում գրավոր պայմանագրի հիման վրա:

Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի տիպային ձևը Ներդրումային ընկերությունը Հաճախորդին է տրամադրում այդպիսի պահանջ ներկայացնելու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հաճախորդի և Ներդրումային ընկերության միջև տեղեկությունները փոխանցվում են գրավոր (փաստաթղթային) եղանակով, իսկ Ներդրումային ընկերության գործունեության կանոնակարգով նախատեսված դեպքում նաև բանավոր եղանակով: Հաճախորդի կողմից պատվերները կարող են տրվել միայն թղթային ձևով:

Ներդրումային ընկերությունը Հաճախորդին հաշվետվություններ է ներկայացնում Ներդրումային ընկերության ներդրումային ծառայությունների կանոնադրով (այսուհետ՝ Կանոնագիրը) նախատեսված կարգով և ժամկետներում: Հաճախորդի հետ կնքված

պայմանագրով նախատեսված լինելու դեպքում հաշվետվությունները կարող են ներկայացվել նաև քստ յուրաքանչյուր գործարքի:

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի պահանջների Ներդրումային ընկերությունը վարում է առանձնացված հաշվառում յուրաքանչյուր հաճախորդի, ինչպես նաև իր և իր հաճախորդների միջոցների համար: Բացառությամբ Հաճախորդի և Ներդրումային ընկերության միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերի, Ներդրումային ընկերությունը չի կարող Հաճախորդի միջոցները օգտագործել ի շահ իրեն: Կախված ներդրումային ծառայության տեսակից Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում Ներդրումային ընկերության անվանատիրոջ հաշվում կամ հաճախորդի հաշվում, իսկ դրամական միջոցները՝ Ներդրումային ընկերության անունով բացված հատուկ բանկային հաշվում: Ներդրումային ընկերության կողմից կառավարվող կամ նրա անունից հաշվառվող արժեթղթերն ու դրամական միջոցները, ինչպես նաև դրանց օգտագործման հետևանքով ստացված շահույթը չի կարող բռնագանձվել Ներդրումային ընկերության պարտքերի դիմաց: Ներդրումային ընկերության սննկացման կամ անվճարումնական դեպքում նրա կառավարմանը հանձնված արժեթղթերը դրամական միջոցները և դրանց կառավարման հետևանքով ստացված շահույթն առանձնացվում են նրա գույքից և վերադարձվում են Հաճախորդին՝ նրա առաջին իսկ պահանջով:

Ներդրումային ընկերության կողմից գանձվող վճարները սովորաբար ներառում են միջնորդավճարները (որոնք նախատեսված են Սակագրների մասին կանոնակարգով) և այլ վճարները, որոնք Ներդրումային ընկերությունը գանձում է Հաճախորդին ծառայություն մատուցելու կապակցությամբ երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար (օրինակ՝ բանկ կամ ֆոնդային բորսա): Կախված ներդրումային ծառայության տեսակից նշված միջնորդավճարների և այլ վճարների գանձման ձևերը տարբերվում են և դրանց հաշվարկման և վճարման մանրամասն կարգը նախատեսված է Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում: Ծառայությունների դիմաց միջնորդավճարների և այլ վճարների գանձումը սովորաբար իրականացվում է Ներդրումային ընկերության կողմից դրանք գանձելով կամ Հաճախորդի կողմից դրանք ներդրումային ընկերության հաշվին (որը նշվում է ներդրումային ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրում) փոխանցելով: Վճարման ժամկետների և ձևերի վերաբերյալ մանրամասն տեղեկություն կարող եք ստանալ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրին ծանոթանալու կամ ներդրումային ընկերության համապատասխան աշխատակցի հետ խորհրդակցելու միջոցով:

Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրերը համաձայնության կնքվում են մեկ տարի ժամկետով: Սակայն, կախված Հաճախորդի ցանկությունից՝ պայմանագրերը կարող են կնքվել ինչպես ավելի երկար, այնպես էլ ավելի կարճ ժամանակահատվածի համար:

Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի դադարեցման դեպքում Հաճախորդի դրամական միջոցները վերադարձվում են դրանք՝ Հաճախորդի պայմանագրում նշված հաշվին փոխանցելու, իսկ արժեթղթերը՝ Հաճախորդի կողմից նշված պահանջին փոխանցելու միջոցով: Ներդրումային ընկերությունը պատասխանատվություն չի կրում այդ միջոցների կորստի համար, եթե դա տեղի է ունեցել բանկի կամ պահանջի գործողությունների հետևանքով:

Որոշ ծառայությունների դեպքում Հաճախորդի միջոցները իր գրավոր համաձայնության դեպքում կարող են հաշվառվել անվանատիրոջ կամ Ներդրումային ընկերության կողմից բացված արժեթղթերի կամ բանկային հաշվում: Որոշ ծառայությունների դեպքում Հաճախորդի միջոցները իր գրավոր համաձայնության դեպքում կարող են իր անունից գրավորվել կամ տրամադրվել փոխառությամբ: Հաճախորդի արժեթղթերի պահանջում կարող է իր արժեթղթերը հաշվառել որպես իր պարտավորությունների կատարման ապահովման միջոց:

**ՈՒՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏՎԵՐՈՒՄ, ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ԿԱՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՁ ՆԵՎԱՄԸ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՈԶԻՏ ԱՐԺԵԹԳԵՐՈՒՄ ՆԵՐԳՐՈՒՄ ԿԵՆ ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՍ ԵՎ ՀԱՃԱՆՈՐԴԻՆ: ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՓՈՒՆՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՃԱՆՈՐԴԻ ՎՆԱՄՆԵՐԸ, ԵԹԵ ԴՐԱՆՔ ՉՆԵ ՊԱՏՎԱԿԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՏԵ ԱՆՔԱՐԵՆԻՐԸ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳՅՈՒՆՔՈՒՄ:**

**ՈՒՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՃԱՆՈՐԴԻ ԿՈՐՄԻՏԵ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՄ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ (ՉԿԱՏԱՐԵԼՈՒ) ԴԵՊՈԶԻՏ ՀԱՃԱՆՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՍԻ ԿԱՐԳ ԵՆ ԿԵՐԱՈՎԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԵՎ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏՄԱՆՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ:**



### «ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Խդրենացու փողոց 15,  
գրասենյակ 6 Հեռ: (374 10) 546 431 Ֆաքս: (374 10) 547 431  
Էլ. փոստ՝ mail@capital.com.am Կայք՝ www.capital.com.am

Հաճախորդների պատվերները կատարվում են համաձայն Ներդրումային ընկերության պատվերվորի կատարման քաղաքականության (հասանելի է Ներդրումային ընկերության պաշտոնական ինտերնետային կայքի ԿԱՐԳ-ԱՎՈՐՈՒՄ բաժնում): Պատվերների տրամադրման և կատարման մանրամասն պայմանները նախատեսված են ինչպես ներդրումային ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրում, այնպես էլ Ներդրումային ընկերության Ներդրումային ծառայությունների մատուցման կանոնադրում (հասանելի է Ներդրումային ընկերության պաշտոնական ինտերնետային կայքի ԿԱՐԳ-ԱՎՈՐՈՒՄ բաժնում):

- Ներդրումային ծառայությունների մատուցման համար սովորաբար պահանջվող փաստաթղթերն են՝
- (ա) ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը,
- (բ) ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կազմելու և կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագիր, բանկային հաշվի համարը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը, տնօրենի անձնագիրը (լիազորված անձի դեպքում՝ տնօրենի կողմից տրված լիազորագիրը և լիազորված անձի անձնագիրը), բանկային հաշվի վերաբերյալ տվյալներ, արժեթղթերի հաշվի վերաբերյալ տվյալներ)
- (գ) հանձնարարականը:

Ներդրումային ընկերությունը կարող է Հաճախորդից պահանջել նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր: Կախված ներդրումային ծառայության տեսակից Ներդրումային ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերի ցանկը տարբեր է: Փաստաթղթերի մանրամասն ցանկի վերաբերյալ տեղեկությունները կարելի ստանալ Ներդրումային ընկերության ներդրումային ծառայությունների մատուցման կանոնադրման մանրամասնում կամ Ներդրումային ընկերության հետ կապվելու միջոցով: Ներդրումային ընկերության հետ հարաբերություններում տեղեկությունների փոխանակման հոսանքի կապի միջոց է համարվում միայն Հաճախորդի կողմից անձամբ կամ լիազորված անձի միջոցով տեղեկությունների թղթային եղանակով Ներդրումային ընկերության համապատասխան աշխատակցին հանձնելը և անձամբ Հաճախորդին կամ լիազորված անձին տեղեկությունների թղթային եղանակով Ներդրումային ընկերության համապատասխան աշխատակցի կողմից հանձնելը կամ փոստով առաքելը:

#### 4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿՐՈՒՄՅՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԿՆԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԽԱՆ ԿԱՆԻՍՏԻՏՍԻՆ ԶԻՆԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներդրումային ընկերությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները շահերի բախման դեպքերը կանխելու, բացահայտելու և կառավարելու ուղղությամբ: Այդ գործառնության իրականացման պարտականությունն Ներդրումային ընկերությունը դնում է ընկերության մեկ կամ մի քանի աշխատակցի վրա (Համապատասխանության համար պատասխանատու անձ): Այն դեպքում, երբ շահերի բախման կողմ է հանդիսանում Համապատասխանության համար պատասխանատու անձը՝ այդ գործով իր գործառնություններն իրականացնում է ընկերության այլ աշխատակցի: Շահերի բախման կանխարգելմանն ուղղված գործառնություններն իրականացնելիս Համապատասխանության համար պատասխանատու անձնակազմը է:

Ներդրումային ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող յուրաքանչյուր ֆիզիկական անձ, որը տեղյակ է շահերի բախման կամ շահերի բախման առաջացման հավանականության մասին, պետք է ամհապալող այդ մասին տեղեկացնի Համապատասխանության համար պատասխանատու անձին:

Համապատասխանության համար պատասխանատու անձը կարող է՝

- (1) այն դեպքում, երբ Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց միջև ծառայողական տեղեկատվության փոխանակումը կարող է վտանգել կամ վնաս հասցնել Ընկերության մեկ կամ մի քանի Հաճախորդների շահերին, վերահսկել, իսկ անհրաժեշտության դեպքում նաև արգելել այդ տեղեկատվության փոխանակումը.
- (2) առանձին վերահսկել Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող այն ֆիզիկական անձանց, որոնք ներդրումային կամ ոչ հիմնական ծառայություններ են մատուցում

այն Հաճախորդներին, որոնց միջև կարող է առաջանալ կամ առաջացել է շահերի բախում.

- (3) այն դեպքում, երբ տարբեր ներդրումային ծառայություններ մատուցելու կապակցությամբ Ընկերությունում կարող են առաջանալ շահերի բախումներ, Ընկերության համապատասխան կառավարման մարմնին առաջարկություններ ներկայացնել Ընկերության անունից և նրա կազմում այդ ծառայությունների մատուցման իրականացնող Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց աշխատավարձերի միջև ուղղակի կապի բացառման ուղղությամբ.
- (4) առաջարկություններ ներկայացնել Ընկերության կառավարման համապատասխան մարմնին Ընկերության անունից և նրա կազմում Հաճախորդներին ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման կապակցությամբ Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց նկատմամբ անտեղի ազդեցությունների բացառման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու համար.
- (5) այն դեպքում, երբ Ընկերության անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձի ներգրավվումը կարող է խոչընդոտել շահերի բախման արդյունավետ կառավարմանը, Ընկերության կառավարման համապատասխան մարմնին այդպիսի իրավիճակները կանխելու կամ արգելելու ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ:

Այն պարագայում, երբ շահերի բախումը կամ դրա հավանականությունը բացահայտելու օրվանից 1 օրվա ընթացքում պարզվում է, որ շահերի բախման կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված միջոցառումները ձեռնարկելուց հետո մնում է Հաճախորդին վնաս հասցնելու ռիսկը, Համապատասխանության համար պատասխանատու անձը այդ մասին պատշաճ ծանուցում է Հաճախորդին:

Նշված ծանուցումը տեղեկություններ է պարունակում Հաճախորդի կողմից շահերի բախման հիմքում ընկած մատուցվող ծառայություններից օգտվելու վերաբերյալ որոշում կայացնելու համար: Ընկերությունում վարվում է շահերի բախման ռեգիստր, որի հիման վրա Համապատասխանության համար պատասխանատու անձը կատարում է ուսումնասիրություններ, բացահայտում է շահերի բախման տիպոլոգիաներ և Ընկերության կառավարման համապատասխան մարմնին է ներկայացնում շահերի բախման կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված միջոցառումների նախագծեր:

#### 5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԺԵԹՐՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊՊԱՏ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի արժեթղթեր են համարվում.

- ա) բաժնետոմսերը, բաժնետոմսերով անդրադրված իրավունքների համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթերը,
- բ) պարտատոմսերը, և պարտքային այլ արժեթղթերը, բացառությամբ դրամական շուկայի գործիքների,
- գ) դեպոզիտար ստացականները և ա) և բ) կետում նշված արժեթղթերի բաժանորդագրման կամ ձեռքբերման իրավունքը հավաստող փաստաթղթերը,
- դ) ներդրումային հիմնադրամների փայերը և դրանցում մասնակցությունը հավաստող նման այլ փաստաթղթերը,
- ե) շահույթի բաշխման համաձայնությունը, նման համաձայնությանը մասնակցությունը վկայող փաստաթուղթը,
- զ) դրամական շուկայի գործիքները,
- է) անձնցյալ գործիքները,
- ը) կապիտալի (միջոցների) ներգրավման նպատակով օգտագործվող ցանկացած համաձայնությունը, որը ներառում է վերը նշված արժեթղթերի հատկանիշներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 157-րդ հոդվածի բաժնետոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական

**ՌԵՍՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՏՎԵՐՈՒՄ, ՆԵՐԿՐՈՒՄՅՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ԿԱՍ ԽՈՐՀՐԱՍՎԱԿԱՆ ՀՎԵՐՏՎՈՒԹՅՈՒՆՍՄ ՄԵՋ ՆԵՎԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՄԱՔՆԵՐԻ ԿԱՍՐԱՄԱՆ ԳԵՊՊՈՒՄ ԱՐԺԵԹՐՈՒԹԵՐՈՒՄ ՆԵՐԿՐՈՒՄՅՅԻՆ ՀԵՏ ԿԱՊՊԱՏ ՌԻՍԿԵՐ ԿՐՈՒՄ Է ՀԱՃԱՆՈՐԴԸ: ՆԵՐԿՐՈՒՄՅՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՓՈՒՆՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՃԱՆՈՐԴԻ ՎՆԱՄՆԵՐԸ, ԵԹԵ ԴՐԱՆՑ ՉԵՆ ՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՏԵ ԱՆՔԱՐԵՆԻՐԸ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐՊՅՈՒՆՔՈՒՄ:**

**ՌԵՍՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՃԱՆՈՐԴԻ ԿՈՐՄԻՏԵ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՍ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՍՐԵԼՈՒ (ՉԿԱՏԱՐԵԼՈՒ) ԳԵՊՊՈՒՄ ՀԱՃԱՆՈՐԴԻ ՆԿԱՍՄԱՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԻՐԱՊԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԵՎ ՆԵՐԿՐՈՒՄՅՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱՏ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ:**



կապիտալ  
ինվեստմենտներ

**«ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՆԵՐ» ՓԲԸ**

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Խորենացու փողոց 15,  
գրասենյակ 6 Հեռ: (374 10) 546 431 Ֆաքս: (374 10) 547 431  
Էլ. փոստ՝ mail@capital.com.am Կայք՝ www.capital.com.am

ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

Համաձայն օրենսգրքի 154-րդ հոդվածի պարտատոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը՝ դրանում նախատեսված ժամկետում պարտատոմս թողարկած անձից ստանալ պարտատոմսի անվանական արժեքը կամ գույքային այլ համարժեք: Պարտատոմսը դրա տիրապետողին իրավունք է տալիս նաև ստանալ պարտատոմսի անվանական արժեքից տոկոս կամ այլ գույքային իրավունքներ:

Մնացած արժեթղթերի հետ կապված տեղեկություններ Հաճախորդը կարող է ստանալ Ներդրումային ընկերության ամունից և նրա կազմում ծառայություններ մատուցող համապատասխան աշխատակցից:

Եթե Հաճախորդի կողմից ներդրում է կատարվելու այնպիսի արժեթղթերում, որոնք սույն մկարագիրը ստանալու կամ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու պահին հրապարակային առաջարկի առարկա են, ապա այդ արժեթղթերի ազդագիրը կարող եք ձեռք բերել՝

(ա) էլեկտրոնային տարբերակը՝ թողարկողի կամ տեղաբաշխողի (այդ թվում արժեթղթերի դիմաց գանձումը իրականացնող անձի) և Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքերից,

(բ) թղթային տարբերակը՝ թողարկողին կամ տեղաբաշխողին (այդ թվում արժեթղթերի դիմաց գանձումը իրականացնող անձին) դիմելու միջոցով, ընդ որում ազդագրի տպագիր տարբերակը պետք է տրամադրվի ոչ ուշ, քան մնան պահանջը մերկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Ռիսկը արժեթղթում ներդրում կատարելու հետ կապված կորստի հավանականությունն է:

Կախված կորստի հավանականության առաջ գալու հավանականությունից կարելի է դասակարգել հետևյալ ռիսկերը:

**(ա) Պետության ռիսկ կամ քաղաքական ռիսկ**

Հավանականություն, որ այն պետությունում, որտեղ գրանցված են կամ պահվում են արժեթղթերը, տեղի կունենան իրադարձություններ, որոնք կազդեն տվյալ պետության քաղաքական կամ տնտեսական կայունության վրա, որի արդյունքում Հաճախորդը ամբողջությամբ կամ մասնակիորեն կկորցնի իր ներդրումը կամ կկրի էական վնաս:

**(բ) Արտարժույթային ռիսկ**

Հավանականություն, որ արտարժույթի փոխարժեքը կփոխվի այնպես, որ արտարժույթով գնանշվող արժեթղթի ՀՀ դրամով արտահայտված գինը փոխվի Հաճախորդի համար անշահավետ ձևով:

**(գ) Լիկվիդայնության ռիսկ**

Հավանականություն, որ կունկրետ պահին հնարավոր չլինի արժեթուղթը վաճառել այն գնով, որը ոչ էականորոն կտարբերվի այդ արժեթղթերով կատարված վերջին գործարքների գներից:

**(դ) Գնային ռիսկ**

Հավանականություն, որ արժեթղթի գինը կփոխվի Հաճախորդի համար ոչ ձեռնտու ձևով:

**(ե) Վճարունակության ռիսկ**

Հավանականություն, որ պարտքային արժեթղթի թողարկողը ժամանակին կամ ընդհանրապես չկատարի արժեթղթի սեփականատիրոջ մկատմամբ իր պարտականությունները:

**(զ) Տոկոսային ռիսկ**

Հավանականություն, որ Հաճախորդի արժեթղթի հետ կապված տոկոսադրույքները կամ դրանց տարբերությունը փոխվի այնպես, որ Հաճախորդը դրա արդյունքում կրի վնաս:

**(է) Պահառության կամ ենթապահառության ռիսկ**

Հավանականություն, որ Հաճախորդը պահառուի կամ ենթապահառուի (որն իրականացնում է Հաճախորդի արժեթղթերի պահառությունը կամ ենթապահառությունը) անվճարունակության, անփութության կամ անօրինական գործողությունների հետևանքով լրիվ կամ մասնակիորեն կորցնի այդ արժեթղթերը:

**(ը) Հարկային ռիսկ**

Հավանականություն, որ նորմատիվ իրավական դաշտի անկատարության կամ փոփոխությունը կարող է հանգեցնել Հաճախորդի արժեթղթերով կատարվող գործառնությունների արդյունքում ստացված հասույթը ենթարկվի կրկնակի հարկման:

**(թ) Իրավական ռիսկ**

Հավանականություն, որ ՀՀ կամ այլ պետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության չիմացության հետևանքով Հաճախորդը ենթարկվի քաղաքացիական, վարչական կամ այլ պատասխանատվության:

Ռիսկերի սույն ցանկը սպառնիչ չէ հետևաբար արժեթղթերում ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հաճախորդը պետք է գնահատի և վերլուծի ինչպես սույն փաստաթղթում ներկայացված, այնպես էլ այլ հավանական ռիսկերը:

Արժեթղթերում ներդրում կատարելու հետ կապված յուրաքանչյուր ռիսկ գնահատելիս Հաճախորդին խորհուրդ է տրվում իր գիտելիքների և փորձի շրջանակներում խորությամբ ուսումնասիրել այդ ռիսկերի ազդեցությունը արժեթղթերի վրա:

**6. ՏԵՐԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ**

Ներդրումային ընկերությունը կախված Հաճախորդի հետ կնքված պայմանագրից և արժեթղթից գործարքները կարող է կնքել բորսայում («ՆԱՄՂԱԶ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում) կամ արտաբորսայում, այն դեպքում, երբ արժեթուղթը բորսայում ցուցակված կամ առևտրին թույլատրված չեն և դա թույլատրված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**7. ՄԱԿԱԳՆԵՐԸ**

Ներդրումային ծառայությունների մատուցման համար Ներդրումային ընկերության կողմից գանձվող սակագներին կարող եք ծանոթանալ այցելելով Ներդրումային ընկերության պաշտոնական ինտերնետային կայքը կամ դիմելով ընկերությանը:

**ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝** ՊԱՏՎԵՐՈՒՄ, ՆԵՐԿՐՈՒՄՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ԿԱՄ ԽՈՐՀՐԱՍՎԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԱՄ ՄԵՋ ՆԵՎԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՄԵՆԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳԵՊՁՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԿՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱՍՏ ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ Է ՀԱՃԱՍՈՐԴԸ: ՆԵՐԿՐՈՒՄՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՓՈՒՆՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՀԱՃԱՍՈՐԴԻ ՎՆԱՄՆԵՐԸ, ԵԹԵ ԴՐԱՆՔ ՉԵՆ ՊԱՏՆԱՎԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ ԱՆՔԱՐԵՆԻՐԸ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳՅՈՒՆՔՈՒՄ:

**ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝** ՀԱՃԱՍՈՐԴԻ ԿՈՂՄԻՏԵ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՄ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ (ՉԿԱՏԱՐԵԼՈՒ) ԳԵՊՁՈՒՄ ՀԱՃԱՍՈՐԴԻ ՆԿԱՏԱՄԱՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԻՐԱՎԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԵՎ ՆԵՐԿՐՈՒՄՍԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏԱՄԵՆԱՍՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ: